Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով նպաստել երկու երկրների երկկողմ հարաբերությունների զարգացմանը և նպատակ ունենալով դյուրացնել իրենց քաղաքացիների տեղաշարժը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հայկական դիվանագիտական վավեր անձնագրով, առանց մուտքի արտոնագրի կարող են մուտք գործել Ֆրանսիայի մայր տարածքի, ինչպես նաև անդրծովյան դեպարտամենտներ, շրջաններ, անդրծովյան վարչական միավորներ և Նոր Կալեդոնիա վեց ամսվա ընթացքում 90 օր ընդհանուր տևողությունը չգերազանցող՝ մեկ չընդհատվող կամ բազմակի այցերով:

Վերը նշված 90-օրյա ժամկետի հաշվարկն սկսվում է Շենգենյան գոտի կամ Ֆրանսիայի Հանրապետության տարածքի՝ այդ գոտում չընդգրկված որևէ մաս առաջին մուտքի օրվանից:

Հոդված 2

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացիները ֆրանսիական դիվանագիտական վավեր անձնագրով, առանց մուտքի արտոնագրի կարող են Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործել վեց ամսվա ընթացքում 90 օր ընդհանուր տևողությունը չգերազանցող՝ մեկ չընդհատվող կամ բազմակի այցերով: Վերը նշված 90-օրյա ժամկետի հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետություն առաջին մուտքի օրվանից:

Հոդված 3

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պետության դիվանագիտական անձնագիր ունեցող քաղաքացիները պարտավոր են մուտքի արտոնագրեր ստանալ սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված տևողությունը գերազանցող՝ մեկ կամ բազմակի այցերի համար:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Հայաստանի և Ֆրանսիայի գործող օրենքների և կանոնակարգերի պահպանման պայմանով և միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով փոխանակում են իրենց երկրների՝ շրջանառության մեջ գտնվող, նոր կամ փոփոխված դիվանագիտական անձնագրերի նմուշները և միմյանց իրազեկում են այդ անձնագրերը տալու և գործածության պայմանների մասին:

Այդ անձնագրերը ներկայացնելու, տալու և գործածության պայմանների վերաբերյալ ցանկացած փոփոխության մասին մի Պայմանավորվող կողմը տեղեկացնում է մյուս Պայմանավորվող կողմին դրանք կիրառելուց հնարավորության դեպքում առնվազն վաթսուն օր առաջ:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ նախապես՝ 90 օր առաջ, ծանուցելով դիվանագիտական ուղիներով:

Պայմանավորվող կողմերը կարող են ամբողջովին կամ մասամբ կասեցնել սույն Համաձայնագրի կիրառումը՝ կասեցման և կիրառման վերսկսման մասին ծանուցելով դիվանագիտական ուղիներով:

Համաձայնագրի իրականացմանն առնչվող տարաձայնությունները Կողմերը ջանում են հաղթահարել դիվանագիտական ուղիներով:

Հոդված 7

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս Պայմանավորվող կողմին ծանուցի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին: Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վերջին ծանուցումը ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

Կատարված է Փարիզում 2009 թվականի հոկտեմբերի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. ապրիլի 1-ին